

# ՎԵՐԴԻ ԻՏԱԼԱՑԻ ԵՐԳԱՅԱՆԻՆ



## ՆՈՐ ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆՆ

**Ա**ՅՍ օրերս իտալական քերթերը մեծ եռանդեամբ և ազգային ոգով յոնկուած՝ կը զբաղեցընեն ընթերցասէր հասարակութիւնը իրենց հռչակասոր երգահանին ներքողիչք և նկարագրերով, յորոց մենք ևս ինչ ինչ կը քաղենք ի Բազմավիպիս, գեղարուեստից այս ձիւղին հետամուտս մեր ուշիմ ազգայնոց ի խրախոյս և յօրինակ :

« Գեղարուեստից սրահի մէջ հրաշալի փունջ մ'այլ աւելցաւ, և բովանդակ իտալիան անա անգամ մ'այլ կ'ողջունէ՝ իրեն փառք եղող և այլոց նախանձելի՝ Յովսէփ Վերդեայ միշտ աշխոյժ և կորովի հանճարը : Մեր իրաւացի ակնկալութիւնն՝ զառանցանք մի չէր. Վերդեայ նոր թատրերգութեան ներկայացումն՝ երեւակայուածին շափ հրաշալի եղաւ, նոր՝ իւր տեսակին մէջ՝ այն սքանչելի երեւակայութեան համար, որով կազմեց Նարուզը, Մակրետ և Հոնիկուիտ, Այիդա և Ուտելլոյ » :

Հետեւեալ հատուածքն, փալտափի առաջին անգամ ներկայացուցման և այնու Միլանոս մէջ պատճառուած յուզման նկարագրեր են, զորս՝ ասանձիկն ասոր հաւնար Միլան գացած վիենետկոյ քերթին խմբագրապետը՝ Ժակ Ի Ժակ մաս մաս իւր խմբագրատան կ'ուղարկէր :

Միլան, վետր, 9. Ժամ 2 30 միջօր .

« Աւելորդ կը համարիմ նկարագրել՝ քաղաքիս մէջ երեկունէ սկսուած տարօրինակ յուզումը, Վիկտոր Էմմանուէլի սրահին մէջ իրարու կը հանդէպին շատ տարբեր դիմագծով խմբագրապետք և արուեստագետք, հօս խումբուած այս գեղեցիկ գործոյս ներկայ լինելու համար, և որոց թիւն առ նուազն հարիւրէն աւելի է. — Տոմարայի սենեկին քով խնդրողներ գեռ կը յաճախեն, և այս առաւօտ վերջին հասնողներ տակաւին մի քանի տեղ կըրցան գտնել. կ'ըսուի թէ բազկաթոս մի՝ երեք հարիւր փրանկի վաճառուեր է... Քաղաքիս զլխատր իլիւաններ բուրովին բռնուած են. և բազմութիւնն արդէն կէսօրէն սկսած է թատրոնի մեծ սրահին զբան առջեւ դիզուիլ, որպէս զի իսկոյն որ բացուի՝ լաւագոյն տեղերը պրաւեն, ասոնց վրայ աւելցան

հարիւրի չափ ուսեալ երիտասարդը, և ամբօին հետզհետէ կը ստուարանայ : Այժմէն կը տեսնուի որ մուտքն ինքս խառնիխուռն պիտի լինի, և զույ՛է ասոր համար կանխեն՝ դռները ժամն հինգին քանայ : Արդէն ոստիկանութեան զինուորը և պահապաններ սկսած են թատրոնի հրապարակին անցքը կանոնաւորել, ուր ամենեւին աշխոյժ և ազմուկ տիրած է :

Հեռագրատան առջեւ սաստիկ խառնակութիւն է. կը տեսնեմ՝ երկար հեռագրեր՝ որ օտար տէրութեանց թերթերու կ'ուղղուին. տեսնե՛նք այս զարմանալի երեկոյն » : . . .

Միլան, փետր. 9, ժամ 8. 10 միջօր.

« Ինչպէս կը գուշակէի՝ հրապարակին անցքը ինքս դժուարացաւ, հարկ եղաւ պահապանաց միջամտութիւն և զիւրացընելու համար՝ նորանոր կարգադրութիւններ ընել :

Ժամն եօթնէն սակաւ մի յետոյ՝ սկսաւ կառաց երկար շարք մի թատրոնի մօտենալ՝ ի հարկէ շատ դանդաղութեամբ, որոց մէջ բազմաթիւ բարձրատիճան անձինք կը տեսնուէին :

Հրապարակին մէջ ասեղ մ'այլ չի ձգուիր, և Սկայայ և Մարտինեան սրբանտոցը՝ այլ եւս մարդ չեն կրնար ընդունիլ. իսկ օրագրապետաց համար սահմանեալ խցիկներ՝ այնպէս լեցուած են, որ կարծեմ՝ դժբաղդաբար պիտի օտիպուինք՝ տեսարանը նկարագրելու համար՝ անպազար զիրար մղել ու քշել և անկրթաբար աշխատիլ » :

Միլան, փետր. 9, ժամ 8. 40 միջօր.

« Անպատմելի շփոթութիւն մի թատրոնի դրան առջեւ տիրած է. գաւթին, սրահներու և բուն թատրոնի մէջ՝ յորս տարօրինակ յուզում կը տեսնուի՝ հանդիսականաց ակնկալութիւնն ամենամեծ է. ոմանք կ'ուզեն վայրկեան մ'առաջ տեսարանաց բեմին վրայ վէրդինն ողջունել՝ այլք գէմ կը դնեն, բայց վերջապէս անձկութիւնն յաղթեց :

Ութ ժամէն սակաւ մի յետոյ՝ հանդիսականաց զահլինը վսեմ տեսարան մի կ'ընծայէ, և ըսելով՝ թէ՛ զիւրագոյն է երեւակայել քան նկարագրել՝ արդէն սովորական զարձած բացատրութիւն մի կրկնել չենք համարիր :

Ահա ներկայից մէջ կը տեսնեմ վսեմ Մարտինի՝ հասարակաց կրթութեան պաշտօնեայն, և այսօր Տորինէն հասած՝ Լետիցիա իշխանուհին (թագաւորին եղբոր կինը) և Առստայ գուբն, ասոնց հետ նաեւ Մորոսինեան Հաւմբա ազն. կոմսուհին. յետոյ կու գան բազկաթոռներու վրայ նստած՝ դրեթէ բոլանդակ աշխարհիս տպագրութեան ներկայացուցիչներն և բազմաթիւ արուեստագէտք, զերասանք և երաժիշտք՝ բնիկ և օտար պարոնայք. յետոյ նստարանաց վրայ խնդուած են Միլանու ամբողջ խառնազաննը՝ ունեցած չունեցած զարդերով, միւլեւ սասաներկու անձ մի նստարանի վրայ :

Յիրաւի զարմանալի՛ բան . ամբողջ թատրոնը լի է խիտ առ խիտ զլուխներով . զահլիճը յուզմամբ ելեկտրացած է , և տեսարանն՝ շլացուցիչ » ...

Միլան, փետր . 9, Ժամ 9 . 40 միջօր .

« Ժամ 8 . 20ին կը տրուի զանգակի առաջին նշանն , և ամէնքն իրենց տեղերը կը զետեղուին . հինգ վայրկեան վերջ՝ երաժշտապետ պր . Մասքերոնի իւր ուղղութեան տեղը կ'ելնէ , և տիրած խորին լուսութեան մէջ՝ յանկարծ հարուածը կու տայ :

Թատրերգութիւնը նախերգանք չ'ունի . նուազն կը սկսի առաջ րոյի կատարեալ միաձայնութեամբ , և յետ աշխոյժ և հակիրճ նուագածութեան մի՛ բեմադրել վարագոյրն կը բարձրանայ : — Հանգիտականք ամենամեծ մտադրութիւն կը զգենուն , և դերը կը յառաջէ անդադար հաւանութեան արտայայտութիւններով : Մարէլի (Փաշտոտափ) զրուցուածքը շատ վսեմ է , յըստակ և աշխոյժ իմաստներ , մինչեւ ներկայից ակորժը կը շարժէ կրկին լսելու : Յաճախ հաւանութեան ցոյցեր կը կրկնուին՝ մանաւանդ նուագաց , որ իրենց գեղեցկութեան հետ ի միասին ամենանոր թարմութիւնն այլ միացուցած լինելով , եթէ այսպէս կարելի է ըսել , հանդիսականաց ակորժն ու հետաքրքրութիւնը միանգամայն կը զրգռեն : Այսպէս ներկայացուցումն և նուագը՝ երագութեամբ յառաջ կը խաղան մինչեւ ցլեթը արարուածին , և ճիշդ ինն ժամուն բեմադրելը կը ձգուի :

Ընդհանուր ծափահարութիւն կը տիրէ , և բեմին վրայ կ'երեւին շնորհակալու դերասանք . այն ժամանակ բոլոր հանդիսականք զվերդին յառաջ կը հրաւիրեն , որ երկու անգամ դերասանաց հետ՝ մի անգամ այլ առանձին կը ներկայանայ . — յիրաւի աննկարագրելի է առջեւ բացուած զգայուն տեսարանը . բոլոր հանդիսականք ոտքի կանգնած են , և մինչդեռ այն ընդարձակ թատրոնը կը թնդայ այրական կրծոց « Կեցցե՛ք՝ վերդի » զօրաւոր աղաղակներով , միւս կողմանէ բոլոր սիկնայք իրենց մեռաքսեայ վարշամակները առտանելով՝ զարմանքնին կը յայտենն :

Ինքն վերդին այլ զգացուած է , դէմքը՝ խորհրդաւոր . ով որ տեսած է զնա՝ իւր Ոտեչոյ թատրերգութիւնը ներկայացուցած ժամանակ , այժմ պիտի չկարենայ ճանչնալ . վերդիի դիմագիծը փոխուած է . այլ եւս չէք տեսներ անոր նախկին կարճ՝ բայց լի մօրուքը , ուր սպիտակն ու սեւը միասին եկած՝ ջիբար կը մեղմէին , այլ անոր փոխան՝ ձեան պէս կը փայլի կզակին ստորտը՝ փրանկական ձեւով հասած մազէ փնջիկը , Սրածայր քիթն այլ դիմաց տեսակ մի քաղցրութիւն և հեզութիւն կ'ընծայէ , մինչդեռ առաջ շինականութիւն և կարծես տմարդի անվստահութիւն մի կ'արտայայտէր : Հագուստը սեւ է , վրան առած է վերիվերանց շինուած կարճ ու սեղմ մինգան մի և անզրաւարտի . և եթէ շնանցոց մի՛ զինքը այս ձեւի մէջ տեսնէ , անտարակոյս ծեր ու կորովի գիւղի վաճառական մի պիտի համարի :

Շարժումները փոփոխական է՝ առանց արուեստակութեան. ինքը ձկան պէս աշխոյժ է, բարձրահասակ, և հագուստին համեմատ՝ նիհար, շարժուածքն պարզ ու անկեղծ ։

Գահլճէն գուրս կ'եղնեմ. շրջակայ սրահներու և գաւթին մէջ՝ ամէն կողմէն զարմանաց և զմայլման բացազանշութիւներ կը լսեմ՝ Վերդեայ անսպառ ուրի հանճարոյն այս երիտասարդական աշխուժի և թարմութեան մասին ։ Ստոյգ է որ առաջին արարուածին երկրորդ մասն ընտրելագոյն, բայց և այսու հանդերձ բովանդակ գործն՝ կատարելութիւն և վսեմութիւն է ։ » ։

Միլան, փետր. 9, Ժամ 10. 38 միջօր.

« Ժամն 9. 25 ին կը սկսի երկրորդ արարուածն, որոյ առաջին տեսարանն ներք սակաւ ինչ երկայն են և շատ նշանակութիւն այլ չունին. թեթեւ ծափահարութիւն մի միայն լսելի եղաւ Փաշտտափի Կոսիկիեայ հետ ըրած երկխօսութեանէն վերջը. բայց ահա խիստ աշխոյժ և զուարճալի է թէ ըստ ներկայացուցման և թէ ըստ երաժշտութեան Փաշտտափի ընդ Փրոքայ երկխօսութիւնն, զոր կ'ընդհատէ Պինիկորսի դերասանն՝ իւր սքանչելի եղանակաւ արտաբերած մենախօսութեամբն ։

Երբ կ'աւարտի՝ հանդիսականք յառաջ կը կոչեն զՄարէլ և Պինի, բայց ծափահարութիւնք կը զադրին՝ զի Վերդին յանձն չառնուր ներկայանալ ։

Հետեւեալ տեսարանը՝ յորում կը ներկայացընէին չորս կանանց առ Փաշտտափ ըրած ծաղրածութիւնը՝ բուական երգք և յաջող կատարուեցաւ. բովանդակ երաժշտութիւնը՝ նիւթին համեմատ՝ հրաշալի արուեստով ծաղրածու և ձանձրացուցիչ է. գեղեցիկ է Փաշտտափի մուտքն և մանաւանդ անոր Ալիւ տիկնոջ հետ ըրած խօսակցութիւնն. յաճախ ծափահարութիւն զրգող Փաշտտափի իմաստքը՝ զոր կը փափագէին կրկին լսել, և ամենէն ընտիր Մարէլն ։ Ամբողջ ծաղրածութիւն և Նանէտ տիկնոջ ընդ Փենտոնի երկխօսութիւնն՝ շատ գեղեցիկ էր, և հանդիսականք խորին մտադրութեամբ դիտեցին՝ մինչեւ որ ժամն 10. 15 բեմարգելը ձգուեցաւ ։

Ակումբը կարգէ դուրս կը յուզուի, և տասն մայրկենի չափ թատրոնը կը թնայ ծափահարութեամբ և բարձրաձայն կնցցի՝ աղաղակներով. կը ներկայանան անգամ մի բոլոր դերասանք, յետոյ Վերդին կը հարկադրի հինգ անգամ մէլտեղ գալ, և երբ հանդիսականք Հարբիգ Բոյիտոն կը հրաւիրեն, նա՝ վեցերորդ անգամ զՎերդի հետն առած բեմ կ'եղնէ ։

Սոյն արարուածին երկրորդ մասն՝ յիրաւի կատակերգակ արուեստին չըքնաղագոյն պսակն է. Վերդին՝ իտալական կատակերգակ թատրերգութեան մէջ գերազանց անձնաւորութիւն մ'է, և միշտ անաղօտ պիտի մնայ իւր բարձր համբաւը, գտած լինելով այս նոր և իւր նախորդներէն բոլորովին տարբեր քնարերգակ կատակերգութեան հրաշալի տեսակը ։ » ։

Միլան, փետր. 10, ժամ 0. 5 առաւօտ.

« Երբորդ արարուածն կը սկսի ժամն 10. 45, որոյ առաջին տեսարանքը նոյնպէս աննշան են. բայց առ սակաւ սակաւ դերը կ'ողեւորի, երբ յաջորդ տեսարանաց մէջ կը պատրաստուի երկրորդ ծաղրածութիւն մ'այլ առ փալստափ. զիրար կը յաջորդեն զեղեցիկ հատուածներ, և կը լսենք բազմախառն ծափահարութեամբք Երլլա տիկնոջ սրանչելի կերպով նուագած՝ Ալիկէի հրաշալի խօսակցութիւնը: Նոյնպէս ծափահարութիւն կը գրգռէ երբորդ արարուածիս առաջին մասին աւարտը:

Փենտոնի ազնիւ վիպերգութեամբ՝ զոր Գարբէին գերասանն զգացմամբ և ախորժելի եղանակաւ կ'արտասանէ, ահա կը բացուի երկրորդ մասին վարագոյրը, որ իւր ամբողջութեան մէջ՝ թատրերգութեան ընդհանուր ոճէն կը տարբերի, այնպէս որ վերջին ամբողջ արարուածն՝ նախորդաց բարձրութիւնը չպահնց, մանաւանջ երկրորդ արարուածին՝ երկրորդ մասին համեմատութեամբ:

Գիշերաշրջիկ ջահաւոր դիւաց տեսարանն՝ ամենագեղեցիկ էր, նուազը միշտ հրաշալի, մանաւանջ այս անգամ առասպելեալ կանանց պարին հետ միախառնած լինելով՝ շատ ախորժելի անցաւ: Հանդիսականք կը փափագէին կրկին լսել Նանետի երգը՝ բայց չընտրեցաւ:

Մասալուութիւնը մինչեւ ցվերջ անպակաս էր, երբ խոճապուկ ըսուած ոճով՝ թատրերգութիւնս կնքող՝ հրաշարուեստ նուագ մի հնչեցուցին, որոյ յաջորդած անագին ծափահարութեանց մէջ՝ բեմաբզելն խոնարհեցաւ, ժամն 11. 40:

Կը տեսնեմ անպատմելի յուզումն և ալմուկ. բեմը հրաւիրեալներն եօթն են. վերդին կը ներկայանայ երկիցս առանձին, երկու անգամ թոյխոյի հետ և երկցս ընդ գերասանաց:

Վերջին անգամ վերդին միայն է. բոլոր տիկնայք ոտքի կանգնած վարձամակնին կը առտանեն. զահլճին մէջ պարոնայք գլխաշոցնին կը ճօճեցընեն, միանգամայն զղորդեցընելով թատրոնին ընդարձակ սրմբը՝ զմայլեալ սրբից եռանգուն աղաղակներով՝ կեցցէ՛ վերդի, կեցցէ՛ արուեստն խալական... »

Վերդին այլ երջանկութեամբ կը ժպտի... »

Միլան, փետր. 10, ժամն 0. 50 առաւօտ.

« Հուսկ խորհրդածութիւններս ընելով, ես կը համարիմ որ փաշտափր՝ մեծ հանճարոյն անպատելի լինելուն ակն յայտնի նշանակ մ'է:

Վերդին այս գժուար թատրերգութիւնս երաժշտութեամբ զգեցընելով՝ ա՛մենամեծ զործ մ'ըբաւ. ուր նիւթոյն բարձրութիւնն՝ երգահանին օգնած է, մանաւանջ երկրորդ արարուածին մէջ: Հեղինակն իւր այս վերջին գործին մէջ՝ ակնկալութիւնը ստուգեց, և նուագին ընտիր ընտիր մասերով՝ յաջողութեամբ պակեց այս գժուարին ձեռնարկը: — Գործոյս ընտրելագոյն մասն է՝ երկրորդ արարուածին երկրորդ մասն, մինչդեռ երբորդն այն բարձրութիւնը չունի, բայց ցածութիւնն այլ միշտ համեմատական է:

Դարձեալ զիտելու բան է որ հանդիսականաց բնաւ խնկիր մի չչնորհեցաւ : Միով բանիւ ֆալստափ արուեստի հրաշալիք մ'է, ուր հանդիսադէտը ամենեւին ձանձրոյթ չզգար, վասն զի անդադար զիրար յաջորդող գեղեցիկ տեսարանք և նուազք՝ անոր ամբողջ մտազրութիւնը ներկայացուցմանս հետ կաշկանդուած կը բռնեն. և եթէ լաւ ուշ զնենք, սա յայտնապէս կը քարոզէ մեզ՝ թէ տակաւին վերդին մտաց զարմանալի զարուհը կը վայելէ :

Թատերարեան հանդերձ իւր պատրաստութեամբք և հանգամանօք՝ ամենաճոխ է. բայց, ներուի մեզ ըսել, ներկայացուցման գործադրութիւնը միշտ անթերի չեղաւ. սակայն կը յուսամք՝ որ այսօրուան խակութիւններ՝ յաջորդ երեկոյններ հասունանալով, փառաւոր գործը՝ իւր ամբողջ էութեամբն փայլեցընեն » :

Միլան, փետր. 9. Ժամ 9. 15 միջօր.

« Երեկ երիկուն իսպաիոյ Հումբերտ թագաւորն ուղղած է ներկայացուցումն սկսելէն առաջ՝ առ մեծ երգահանն վերդի՝ հետեւեալ հեռագիրն .

« Առ վեմամփայլ Յովսէփ վերդի՝ խորհրդական տէրութեանս,

Միլան .

Թագոռնիկ և ես՝ չկարելով ներկայ գտնուիլ ֆալստափի ներկայացուցմանը, կը կանխենք ասիս առ ձեզ մեր մաղթանքներ և զարմացման զգացումներուս արտայայտութիւնքը՝ նախ քան զայն ժափահարութիւններ, որք սակաւ մի յետոյ պիտի ողջուեն անսպասելի հանձարոյդ այդ նոր արգասիքը : Բերկարիւն քո կենաց տարիներ՝ վայելելով միշտ արուեստիդ գերազանց պատիւը, մեր սէրը և իտալիոյ երախտագիտութիւնը, որ նոյն իսկ իշր տխրագոյն օրերուս մէջ՝ չմոռացաւ ի պատիւ ձեզ՝ ընել իշր հայրենասիրական ցոյցերն » :

Ասկէ զատ կը լսեմ որ թագաւորը բարեհաճեր է վերդեայ՝ ԲՈՒՍԵՏԻ ՍԵՊՈՒՀ կոչուելու շքանունը շնորհել » :

Թատրոնէն դուրս առ վերդին եղած զարմանաց ցոյցերն .

« Մինչդեռ թատրոնին մէջ այս հրաշալի ներկայացուցումն նորանոր տեսարաններով կը յատաճէր, իւր կրկնակի գեղեցկութեամբ՝ իմաստից բարձրութեամբն և նուազին քաղցրաձայնութեամբ՝ զմայլած ու կարծես մագնիսացած հանդիսականաց ուշք և աչքը յինքն զրուելով, դուրսն՝ հետաքրքիր մարդկան բազմութիւն մի՛ իբրեւ կայարանի մ'առջեւ խոնամ, անհամբեր կը սպասէր ներսը կատարուած իրաց ելքն իմանալ. և յաւարտ իւրաքանչիւր արարուածին՝ այն սակաւ անձինք՝ որ թատրոնէն դուրս կ'ենչնէին ազատ շունչ մ'առնելու, կամ երազութեամբ դէպ ի կեդրոնական հեռագրատունը վազող՝ լրագրատաց սպասեակք, որ ժամանակ ժամանակ թատրոնէն դուրս կը պրծէին ընդարձակ նկարագրեր ձեռքերնին բռնած, ստիպուած էին մի քանի վայրկեան պաշարուած մնալ՝ անհրաժեշտ ինչ ինչ տեղեկութիւններ տալու այն ակամայ դուրս մնացելոց :

Ժամն 11<sup>ին</sup> ամբօրը խիստ ստուարացած էր, և անտարակոյս կը գուշակուէր՝ որ միլանեցիք նոյն ազնիւ զգացման ցոյցեր պիտի ընեն առ մեծ երգահանն, ինչ որ ըրած էին երբեմն՝ իւր Ոսեղլոյ Թատրերգութեան ներկայացուցմանէն յետոյ :

Ամբօին համարելով թէ Վերդին Երգարանատիրաց (Filodrammatici) ըսուած փողոցէն պիտի անցնի, առջուց հօն գացեր զիզուեր էր՝ այն ուզուածութեամբ երկար շարեր ձեւացընելով : Իսկ ինքն այդ ցոյցերէն խոյս տալու նպատակաւ, Թատրոնի ուրիշ կողման փոքր զրանէ մի գուրս ելաւ, ուր կը սպասէր իրեն Միլանու առաջին պանդոկէն առանձին իւր համար զրկուած ազնուական կառք . իսկոյն Վերդին և իւր ամուսինն փութացին մէջ մտնել, և կառքը անշմարելի երագութեամբ Գլթութեան բլրոյն ճանապարհը բռնելով՝ պանդոկը հասաւ :

Բայց հօն այլ կէս ժամու շափ ամբօն բազմութիւն մ'իրեն կը սպասէր . և երբ կառքն հասաւ՝ հնչեց յանկարծ փոթորկածուիչ ծափահարութիւն մի, հանդերձ կեցցե՛ք՝ Վերդի ոգեւորեալ աղաղակներով :

Վերդին այլ զգացուած կ'երեւէր, որոյ նոյն իսկ իւր սենեկաց մէջ՝ կը սպասէր աշտուական յանկարծադիպութիւն մի . զի Սպատ ասպետը՝ իւրաքանչիւրին մուգըը դափնիով զարգարել տուեր էր, իսկ գլխաւոր Վերդեայ անուանած արահիճ մէջ, գեղեցիկ ճարտարապետական ձեւազարդով մի բռնուած՝ հաստատած էր արուեստագործ սարդենահրկա արուէ՛ պակ մի, որոյ տերեւոց վրայ դրոշմուած էին Վերդեայ յորինած երկասիրութեանց անուանքն . մի քանի տերեւ դատարկ թողած՝ ի նշան մաղթանաց գեռ ուրիշ գեղեցիկ երկեր եւս ի լոյս ընծայելու :

Մինչդեռ հռչակաւոր երգահանն հանութեամբ կը զիտէր իւր համար յօրինուած պատուոյ առարկայն, գուրան անլուելի կը հնչէր կեցցե՛ք՝ Վերդին, դո՛ւրս գայ Վերդի՛ն՝ այնչափ բազմութեան աղաղակը . երգահանն ստիպուեցաւ զիջանիլ, երկու անգամ առանձին ներկայանալ, և ժողովուրդը յայտնեց իւր արատաքոյ կարգի զգացումը՝ ծափելով, գոչելով, և շարժելով ուժգին գլխարկ և վարշամակ :

Վերջապէս Վերդին տեղի տալով նորէն կրկնուած աղաղակաց՝ Բոյիտոյի հետ ի միասին պատշգամբն ելաւ, պիտելով առջեւն սարածուած զգայուն տեսարանը :

Յետոյ Վերդեայ արահիճ մէջ ընդունուեցան շատ նշանաւոր անձինք և օտարազգի քննիչք, որ խնդրած էին մտէն իրենց ուրախակցութիւնքն ընել առ մեծ երգահանն :

Քաղաքիս միւս պանդոկաց և սրճանոցերու մէջ՝ մինչև ուշ ժամանակ խօսակցութեան նիւթը՝ նոր ներկայացուած հրաշալի Թատրերգութիւնն էր : —

Ահա ի վերջ նկարագրիս կը հաղորդեմ՝ ամենատոյգ տրբերէ մի ստացած հետաքրքրական տեղեկութիւն . Հոկտարդեայ տունը կանխիկ 160, 000 փրանկ վճարած է Վերդիի, և բովանդակ շահուն ալ <sup>1)</sup> 70 ին 40ը պիտի վճարէ » :